

ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մխիթարյան Է. (Գրիգոր Նարեկացի համալսարան, ԼՂՀ)

mm_elina@rambler.ru

Բանալի բառեր՝ պայմանագիր, պատմագիտություն, փաստարկներ, սկզբնաղբյուրներ, պատմական իրականության կեղծարարություն, հակամարտություն:

«Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» և «Ադրբեջանական պատմագրություն» բառակապակցությունները դժվար համադրելի են թվում, բայց, երբ Ադրբեջանն իր հավակնություններն է ցուցաբերում ոչ միայն քաղաքականապես՝ բնիկ հայկական հողերի նկատմամբ, այլև հայ պատմամշակութային ժառանգության հանդեպ, նպատակային է աշխատում այդ հավակնությունները հիմնավորել «գիտականորեն»՝ նենգափոխելով պատմական իրականությունը, ապա դա որոշակի մարտահրավեր է հայ պատմաբաններին, և միայն քաղաքագետների ու քաղաքական գործիչների խնդրո առարկա չէ: Ադրբեջանական պատմագրությունը հատկապես մեծ ջանքեր է թափում կեղծարարությամբ հիմնավորելու «հայերի եկվորության» (առավել ևս՝ արցախահայության եկվորության), «հայերի վերաբնակեցման» դրույթը, ինչն առավելապես շահարկվում է Արևելյան Հայաստանի մի մասի՝ Ռուսական կայսրության կազմի մեջ մտնելն ամրագրվող Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի լուսաբանման ժամանակ: Այստեղ վեր են հանվում ինչպես «խորհրդային եղբայրության» քողով պաշտպանվող ադրբեջանական պատմաբանների, այնպես էլ մերօրյա ադրբեջանական պետական քարոզչական մեքենային ծառայող

պատմաբանների՝ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի ու դրանց հետևանքների ոչ գիտական լուսաբանումները:

Այսրկովկասյան տարածաշրջանում օրակարգային հանդիսացող Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միջնորդ կողմերը սովորաբար հորդորում են չխորանալ պատմության մեջ, չդիմել պատմական փաստարկների, սակայն ադրբեջանական քարոզչական մեքենան իր զավթողական նկրտումները հիմնավորելու համար լայնորեն կիրառում է պատմության նենգափոխությունը՝ զինադադարի պայմաններում ծայր առած տեղեկատվական պատերազմում զգալի հաջողություններ արձանագրելով: Ավելին՝ չի բավարարվում միայն Արցախի տարածքի նկատմամբ հավակնություններից, այլև՝ «վկայակոչելով» Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը՝ որպես միջազգային պայմանագիր-փաստաթղթեր (Երևանի, Ղարաբաղի, Նախիջևանի և մյուս «ադրբեջանական» խանությունների, հայերի «վերաբնակեցման» և այլ «փաստեր»), փորձում է հիմնավորել Հայաստանի Հանրապետության տարածքի «ադրբեջանական լինելը» ևս: Այս պայմաններում արդիական են ադրբեջանական պատմագիտության համակողմանի քննությունը, քննադատությունը, գնահատումը:

Ադրբեջանի պատմագրության կողմից կոնկրետ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի՝ որպես իրավական փաստաթղթերի, դրանց իրավաքաղաքական հետևանքների համակողմանի հետազոտության անդրանիկ փորձն է մեր հետազոտությունը:

Էտատիզմի սկզբունքներին հավատարիմ՝ ադրբեջանական պատմաբանների աշխատանքները ենթարկվել են քննական մոտեցման, վերլուծվել են՝ համադրելով փաստարկները սկզբնաղբյուրների հետ՝ կիրառելով պատմահամեմատական վերլուծության սկզբունքները:

THE COVERAGE OF AZERBAIJAN HISTORIOGRAPHY OF GIULISTAN AND
TURKMANCHAY AGREEMENTS

Mkhitaryan E. (Grigor Narekaci University, Nagorno Karabakh Republic)